

## ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/1

25 հոկտեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի գանգատը նվազագույն սոցիալական վճարի գծով հաշվարկված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ:

#### **Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Ռոբերտ Սահակյանը հայտնում է, որ 30.04.1999թ. դադարեցրել է իր անհատ ձեռնարկատերի գործունեությունը՝ տալով գործունեության դադարեցման վերաբերյալ դիմում: Դիմումն ընդունվել է, սակայան գործունեությունը չի դադարեցվել: Արդյունքում հաշվարկվել է 240.000 դրամի սոցիալական ապահովության վճար և հաշվարկվել է 131.365 դրամի տույժ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ռոբերտ Սահակյանը խնդրում է չեղյալ համարել սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտքը և հաշվարկված տույժերը:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի սոցիալական ապահովության վճարի գծով պարտքը կազմում է ընդամենը 371.365 դրամ, այդ թվում՝ ապառք 240.000 դրամ, տույժ 131.365 դրամ: Նշված պարտավորությունները հաշվարկվել են 2009թ. մինչև 2012թ. ընկած ժամանակահատվածի համար:

Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի կողմից 30.04.1999թ. հաշվառման վայրի տարածքային հարկային տեսչություն է ներկայացվել դիմում-հայտարարություն հաստատագրված վճար վճարողի գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ: Հաշվի առնելով նշված հանգամանքը Ա/Ձ Ռոբերտ Սահակյանը խնդրում վերանայել սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտավորությունները:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Մինչև 31.12.2012թ. գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում, պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012թ.) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական

վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար: Այսինքն, անկախ գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ դիմում-հայտարարություն ներկայացվելու հանգամանքից, պետական գրանցման վկայականը հարկային մարմին չհանձնվելու պայմաններում Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի կողմից պետք է վճարվեին 5000 դրամ նվազագույն սոցիալական վճարի գումարները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Ռոբերտ Սահակյանի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ